Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 134 - Ա
որոշման

«ԱՎԱԳ ՍԵՐՆԴԻ ՊԱՐՏԵԶՆԵՐ. ԺԱՄԱՆՑ ԵՎ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է գիշերակացով և ցերեկային հոսքով ապահովել լիարժեք խնամք (սնունդ, կեցություն), ժամանցի և զբաղվածության կազմակերպում, հոգեբանական և բժշկական աջակցություն և խորհրդատվություն Հայաստանի Հանրապետության տարածքում սոցիալապես անապահով, կարիքավոր և միայնակ ավագ սերնդի ներկայացուցիչների համար՝ Բարեգործական հիմնադրամի ենթակայության տակ գտնվող Ավագ սերնդի համապատասխան պարտեզներում: Ծրագրի շրջանակներում շահառուները կարող են այցելել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի Բաղրամյան 67/1 և Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքի Վայքի 1 հասցեում գտնվող Ավագ սերնդի ցերեկային կենտրոններ, և գիշերակացով ապրել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի գյուղի Ջիվանի 28 հասցեում գտնվող Ավագ սերնդի տանը: Ավագ սերնդի պարտեզներ կարող են այցելել կենսաթոշակառու հանդիսացող յուրաքանչյուր ՀՀ քաղաքացի, գիշերակացով խնամք կարող են ստանալ միայն խնամակալի բացակայություն ունեցող և անապահով տարեցները:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Հայաստանի Հանրապետության քաղաքացի Հակոբ Թորոսի Սուսանի (անձնագիր՝ 013324066, տրված՝ 09.08.2022. թ., 011-ի կողմից)

4.	Ծրագիրը կատարողը	«Տեր և Տիկին Թորոս և Լուսին Սուսանի» բարեգործական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, Նոր Հաճն համայնք, գյուղ Նոր Գեղի, Ջիվանի 28, ՀՎՀՀ՝ 03577076)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզի Նոր Գեղի գյուղ, Լոռու մարզի քաղաք Ստեփանավան, Վայոց ձորի մարզի քաղաք Եղեգնաձոր: Բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	127,600,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետությունում բնակվող և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող ավագ սերնդի ներկայացուցիչներ (մասնավորապես միայնակ և սոցիալապես անապահով)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2025 թվականի մարտի 1-ից մինչև 2026 թվականի հունիսի 1-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) գիշերակացով խնամք ստացող տարեցների համար՝ ա. 4-անգամյա սննդի ապահովում՝ 25,200,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2025 թվականի մարտի 1-ից մինչև 2026 թվականի հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում, բ. նոր հագուստի, կոշիկի, առաջին բուժօգնության, հիգիենայի և կենցաղային պարագաների ներմուծում՝ 48,000,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2025 թվականի մարտի 1-ից մինչև 2026 թվականի հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում, գ. նոր միկրոավտոբուսի ներմուծում՝ 18,000,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2025 թվականի մարտի 1-ից մինչև 2026 թվականի հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում. 2) ցերեկային կենտրոններում՝ ա. մեկանգամյա սննդի ապահովում՝ 13,000,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2025 թվականի մարտի 1-ից մինչև 2026 թվականի հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում, բ. ձեռագործ աշխատանքի, ֆիզիոթերապիայի, նկարչության, ասեղնագործության, կավագործության խմբակների աշխատանքային նյութերի և պարագաների ներմուծում

		և/կամ ձեռքբերում՝ 2,000,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2025 թվականի մարտի 1-ից մինչև 2026 թվականի հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում. 3) գրասենյակային ծախսեր և գույքի ձեռքբերում՝ 4,000,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2025 թվականի մարտի 1-ից մինչև 2026 թվականի հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում. 4) մեքենայի շահագործման և տրանսպորտային ծախսեր՝ 2,000,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2025 թվականի մարտի 1-ից մինչև 2026 թվականի հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում. 5) կոմունալ ծախսեր՝ 8,400,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2025 թվականի մարտի 1-ից մինչև 2026 թվականի հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում. 6) աշխատավարձեր՝ 7,000,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2025 թվականի մարտի 1-ից մինչև 2026 թվականի հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) սնդի ձեռքբերում՝ 38,200,000 դրամ. 2) նոր հագուստի, կոշիկի, առաջին բուժօգնության, հիգիենայի և կենցաղային պարագաների ներմուծում՝ 48,000,000 (քառասունութ միլիոն) դրամ. 3) նոր միկրոավտոբուսի ներմուծում՝ 18,000,000 դրամ. 4) ձեռագործ աշխատանքի, ֆիզիոթերապիայի, նկարչության, ասեղնագործության, կավագործության խմբակների աշխատանքային նյութերի և պարագաների ներմուծում և/կամ ձեռքբերում՝ 2,000,000 դրամ. 5) գրասենյակային ծախսեր և գույքի ձեռքբերում՝ 4,000,000 դրամ. 6) մեքենային շահագործման և տրանսպորտային ծախսեր՝ 2,000,000 դրամ. 7) կոմունալ ծախսեր (գազ, էլեկտրաէներգիա, ջուր)՝ 8,400,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	1) գրասենյակային ծախսեր և գույքի ձեռքբերում՝ 4,000,000 դրամ. 2) մեքենայի շահագործման և տրանսպորտային ծախսեր՝ 2,000,000 դրամ. 3) կոմունալ ծախսեր՝ 8,400,000 դրամ. 4) աշխատավարձեր՝ 7,000,000 դրամ:

12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	1) Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն. 2) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն. 3) տեղական հասարակական, բարեգործական կազմակերպություններ, հիմնադրամներ, մարզպետների աշխատակազմեր և թաղապետարաններ. 4) հասարակական կազմակերպություններ, որոնք առնչվում են ավագ սերնդի խնամքի և զբաղվածության կազմակերպման հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի իրականացման վերաբերյալ տեղեկության և հաշվետվության ներկայացում հիմնադիր-գործադիր տնօրենին և հոգաբարձուների խորհրդին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

04.03.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ